№ 75 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 4 — 1908 — ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 4 № 75

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւր քանակը տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Ամսական Մէկ ռուբլի
Ամերիկա տարեկան „ 6 դոլլար
Եւրոպա „ „ „ 30 ֆրանկ
Պարսկաստան „ „ 10 ռուբլի

Նախազգուշացումն
Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ — Д. З. Сараджевъ
ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱ — СЕННЕАКІЪ
Նորերս ի վաճառի է հանվել օղի (столовое вино)
„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ“ „Т-во Г. М. Сараджевъ“
ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկետներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։
Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ֆիրմայի էտիկետների վրա անուան և հօրանուան սկզբնական „Դ. Զ.“ „Д. З.“ տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի «այծեամը ժայռի վրա»։
(օ. մ.) առ. 25—7

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
Բաղդադի յայտնի ֆիրմայի, ստացված է Թիւրքիայից և ծախվում է գործարանային գներով ԼԱՐՃԷԻ սերմերի դէպօում, Միխայլովսկի պրոսպէկտ, № 23, և Զ. ՄԱՆԻԵՎԻ մագազինում, Պուշկինսկայա փող., ուղղափառ սեմինարիայի հանդէպ։
առ. (ա. օ) 10—1

Զատկական նուէր
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Մանկական նոր գիրք
Պատմուածքներ կենդանիների կեանքից
Հրատարակութիւն Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴԻ
ԳԻՆՆ է 40 կոպ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցներին։
առ. 3—2

ՊԷՏՔ է ԽՈՒՍԱՓԵԼ ՍԽԱԼ ՔԱՑԼԵՐԻՑ

Գաւառներում պտտող լուրերը խտացրած գոյներով են ներկայացնում իրերի դրութիւնը սահմանագլխի վրա։ Ամեն մի գործողութիւն Թիւրքական կամ ռուսական զինուորական աշխարհում մեկնաբանվում է չափազանցված եղանակով։

Մենք կարեոր ենք համարում կանգ առնել այդ երևոյթի վրա և զգուշացնել մարդկանց չը կանխելու ենթադրեալ եղելութիւնները և բացասական դիրքը չը ստեղծելու վաղաժամ կամ բոլորովին անհիմն կերպով։

Թէ Ռուսաստանը և թէ Թիւրքիան պաշտօնական յայտարարութիւններով հաւաստիացրել են, որ նրանք պատերազմական նպատակներ չունեն միմեանց վերաբերութեամբ։ Եւ կասկած չէ կարող լինել այն բանում, որ նրանք չէին ցանկանայ ենթարկել իրանց պատերազմի արհաւիրքներին և նրա անտանելի ծախքերին առանց ծանրակշիռ և յարգելի շարժառիթների։

Ոչ ոք, անշուշտ, չէ կարող երաշխաւոր լինել ապագայ անցքերի վերաբերութեամբ, ոչ ոք չէ կարող նախատեսել այն բոլոր դէպքերը, որոնք առաջ կը գան բարդացնելու իրերի դրութիւնը, և ոչ ոք չէ կարող անպայման հաւաստիացնել, թէ յանկարծ չեն կուտակվի փոթորկալից ամպեր՝ որոտներ առաջացնելու համար. բայց ենթադրութիւնները չը պէտք է այնքան առաջ գնան, որ ստեղծեն մնասակար երկիւղներ ազգարնակութեան խաւերում և պատճառ դառնան սխալ քայլերի և գործողութիւնների։

Մեզ, օրինակ, հաղորդում են, որ սահմանագծի մօտ գտնվող և մի քանի շրջաններում գիւղացիները տատանումների մէջ են հողերի մշակութեան վերաբերութեամբ և չը գիտեն՝ սերմանել արդեօք առատօրէն թէ զգուշութիւն գործ դնել և սահմանափակել ցանքսերի տարածութիւնը։

Դա մի մեծ և վտանգաւոր թիւրիմացութիւն է, որի մէջ ընկել է ազգարնակութիւնը։

Նա, անշուշտ, պէտք է առանց երերումների և սահմանափակումների շարունակէ իր տնտեսական կեանքը, չենթարկելով նրան ենթադրեալ երկիւղների ազդեցութեան։

Չը պէտք է մոռանալ, որ պատերազմը, եթէ նա նոյն իսկ տեղի ունենայ, մի-երկու օրվայ մէջ չէ կատարվում և նա անմիջապէս չէ դառնում թշնամու ասպատակութիւնների միջավայր։ Եւ ուրեմն՝ նոյնիսկ բարդութիւնների օրերում գիւղական կեանքը դեռ երկար միջոց կարող կը լինի որոշ ազատութեամբ շարունակել իր մշտական գործավարութիւնը իր տնտեսական-արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ։ Իսկ նախօրօք երկիւղների մէջ ընկնել և առանց լուրջ պատճառի թեթեւամիտ քայլեր անել—դա կը լինէր անտանելի և փոքրոգի մի բան։

Այն հանգամանքը, որ պետութիւնները մի որոշ ատիճան զինուորական պատրաստութիւններ են տեսնում, դեռ չէ նշանակում, թէ նրանք պատերազմ են ցանկանում։ Նրանք յաճախ ստիպված են լինում միայն առաջն առնել վտանգաւոր պատահականութեան և յամենայն դէպս անպատրաստ չը լինել, եթէ գործերը սպառնական դիրք ընդունելու լինեն իրականութեան մէջ։ Եւ կան դէպքեր, երբ փոխադարձ զինված լինելը և ուրեմն իւրաքանչիւր կողմի ուժեղ դիմադրական դիրքը վերացնում են պատերազմի հաւանականութիւնը։

Ուստի սխալ պէտք է համարել այն գիւղացիների մտածողութիւնը, որոնք ցանկանում են սահմանափակել իրանց ցանքսերը պատերազմի երկիւղից, կամ թողնում-հեռանում են մայր օջախից դէպի աւելի կենտրոնական տեղերը։

Փախչելու համար ժամանակ կայ շատ և շատ։ Աւելորդ է շտապելը նոյն իսկ ինքնապահովութեան տեսակէտով։

Իւրաքանչիւրը պէտք է, չը կորցնելով իր զգուշութիւնը, շարունակէ իր տնտեսութիւնը և ենթադրութիւնների հիման վրա չը քայքայէ իր ձեռքով իր տնտեսութիւնը։

Գալիք բոլոր բարդութիւնները նախատեսել մենք չենք կարող։ Նրանք կարող են նաև ամենևին տեղի չունենայ։ Ինչու ուրեմն պէտք է տնտեսութիւնը զուր տեղը քայքայվի։

Թող ազգարնակութիւնը այդ սխալը չանի և իր տնտեսական կեանքը շարունակէ նախկին տարիների նման։ Դաշտերը թափուր թողնելը և մայր օջախից հեռանալը առանց լուրջ պատճառների՝ փոքրոգութիւն և երկչոտութիւն է, որ արդարացման հիմունքներ չունեն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 3 ապրիլի

Գովկասի Փոխարքայի կարգադրութեամբ, Թիֆլիսի նահանգապետի տրամադրութեան տակ, մատակարարական պէտքերի համար արդէն բաց թողած զումարներից բացի, կրկին յատկացված է նոյն նպատակով 100,000 ռուբլի։

—

Ուրմիա, 2 ապրիլի

Զրջանում դրութիւնը վտանգաւոր է դառնում։ Վերջին երկու օրվայ ընթացքում սպանվել են 20-ից աւելի մարդ։ Ապրանքներ այլ ևս չեն ուղարկվում և ստացվում։

Մարտի 31-ին յարձակման ենթարկվեցին 4 գիւղեր։ Սպանվեցին 8, վիրաւորվեցին 11 հոգի. քշեցին 1500 ոչխար և տարան բազմաթիւ իրեր։ Վախեցած շինականները, թողնելով դաշտային աշխատանքները, փախչում են քաղաքից։ Ազդեցիկ անձնաւորութիւնները նահանգապետից պահանջում են անյապաղ եռանդուն միջոցներ ձեռք առնել։ Նահանգապետը դիմեց Թէհրան, խնդրելով զօրք ուղարկել կամ իրան արձակել պաշտօնից։ («Հ. Գ.»)

—

Հռօմ, 2 ապրիլի

Ստեֆանիի գործակալութիւնը հաղորդում է այն յայտարարութիւնը, որ արել է Բիլլօվը իր՝ Հռօմ այցելելու առթիվ։

Ի միջի այլոց մատնանշվում է, որ մեծ պետութիւնները քաղաքական տեսակէտից ամենից աւելի ներկայումս զբաղված են նրանով, որ Մակեդոնիայի բարենորոգումների անդլիական և ռուսական առաջարկութիւնները սիմեանց մօտեցնելով, նրա մէջ տիրող անհանդուրժողութեան վերացմանը։ Կարելի է յուսալ, որ դրանով գործնական հետևանքների կարելի է հասնել։

Գերմանիան այժմս էլ ոչ մի անմիջական շահ չունի Բալկանում, սակայն ցանկանում է, որ մեծ պետութիւնների համաձայնութիւնը պահպանվի բալկանեան հարցերում և արիթ չը ստեղծվի միջադէպի։

Ինչպէս իտալական պալատում Տիտանոնիի արած բացատրութիւնները շատ կէտերում զուգադիպվեցին բայխրստագում Բիլլօվի արած բացատրութիւններին, այնպէս և նրանց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները ապացուցեցին, որ ընդհանուր հայեցակէտերը և նպատակները միևնոյն են։ Դա համապատասխանում է նաև եռապետեան դաշնակցութեան ոգուն, որի նպատակը, ինչպէս առաջ, այնպէս և այժմ, խաղաղութիւն և status quo պահպանելն է կազմում։

Ինչ վերաբերում է Աւստրօ-Ունգարիայի՝ դէպի Իտալիան տածած յարաբերութիւններին, երկու պետութիւններն էլ ոչ մի կարիք չէին զգում Գերմանիայի միջամտութիւնը հայցելու, քանի որ Ֆիլլէտտիի և Տիտտոնիի ամենաանժխտելի ծառայութիւններից մէկն էլ հանդիսանում է այն, որ նրանք Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի փոխադարձ յարաբերութիւնները վերստին բարեկամական և լիավստահ դարձրին։ Այդ ձգտումը պաշտպանութիւն է գտնում նաև Էրենտալի լոյալ և դաշնակցութեանը համապատասխանող գործելակերպով։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 1 ապրիլի

Բիբի-Հէյբաթի, Սաբունչիի, Բոմանիի, Բոման-Սաբունչիի, Բալախանիի և Բինաղադիի պետական նաւթաբաժինները աճուրդով կապալով տալու պայմանների համար առևտրի մինիստրութեան մշակած նախագիծը այժմ յանձնված է բօրսային առևտրի և գիւղատնտեսութեան ներկայացուցիչների համագումարների խորհրդին կից կազմված յատուկ յանձնաժողովի քննութեան։

Յանձնաժողովի նիստում, նաւթային վառելիքի թանգութեան հարցի և այդ երևոյթի առաջն առնող միջոցների քննութեան ժամանակ, նաւթային վառելիքի բարձր գների հարցը լուծելու համար ընդունվեցին հետևեալ որոշումները.

1) Միջնորդել կառավարութեան առաջ երեք միլիոն ռ. գումարի փոխառութիւն բաց թողնել՝ նաւթային վառելիքի պահեստ կազմելով օգնութիւն հասցնելու համար Վոլգայի նաւատէրերին, որոնք կարող կը լինեն այդ պահեստից վերցնել վառելիքի հարկաւոր քանակութիւն, չը ճնշելով իրանց՝ պայմանագրեր կապելով։

2) Միջնորդել կառավարութեան առաջ կարելի միջոցներ ձեռք առնել՝ Բագուի նաւթանքերում աշխատանքների կանոնաւոր ընթացքը վերականգնելու համար։

3) Միջնորդութիւն յարուցել պակասեցնելու նաւթի տեղափոխութեան համար գոյութիւն ունեցող տարիֆը Դրօզնայից մինչև Պետրովսկ։

4) Միջնորդութիւն յարուցել նոր երկաթուղի կառուցանելու Եկատէրինինսկի երկաթուղագծի Լիխայա կայարանից մինչև Ցարիցին՝ Դոնի քարածխային շրջանը Վոլգայի հետ միացնելու նպատակով։

5) Խնդրել կառավարութեան՝ միջոցներ ձեռք առնել նաւթային նոր հանքատեղիներ բանալու։

(«Հ. Գ.»)

—

Պէնզա, 2 ապրիլի

Երէկ, երեկոյեան ժամը 9-ին, նահանգական բանտում, 11 քաղաքական բանտարկեալներ, սպանելով դաշոյնով բանտային երկու կառավարիչներին և վիրաւորելով երրորդին, իրանց սենեակից դուրս սողացին առաստաղի վրա բացած անցքից տանիքը, որտեղից, պահակախմբի ուշադրութիւնը հեռացնելու նպատակով, ռումբ նետեցին ներքին բակը և սկսեցին իջնել պարուսինայից պատրաստած սանդուղով դրսի պատը։ Երբ պահապան զինուորը առաջին իջնողին սպանեց, նետվեց երկրորդ ուժեղ ռումբը և նրանից առաջացած ծխի մէջ աննկատելի կերպով բոլոր փախչողները իջան գետին։ Պահապան զինուորների և պահակների հետ ընդհարվելու ժամանակ, փախչելիս, սպանվեցին դարձեալ եօթ բանտարկեալներ, իսկ մի զինուոր վիրաւորվեց դաշոյնով։ Առայժմ հետապնդումները անհետևանք են անցել։ («Հ. Գ.»)

—

Արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովի կողմից Բարձրագոյն անունով ներկացված զեկուցման համաձայն ներումն է շնորհված ներքին գործերի մինիստրի նախկին օգնական Վ. Գուրկոյին, որը մատակարարողական գործում Լիդվալի հետ միասին զեղծումների համար դատապարտված էր սենատի կողմից։

Հաղորդելով այդ մասին «Рѣчь» լրագիրը՝ աւելացնում է, որ Վ. Գուրկոն վերստին կը ստանայ ներքին գործերի մինիստրութեան մէջ իր նախկին պաշտօնը և միևնոյն ժամանակ կը նշանակվի Պետական Խորհրդի անդամ։ («Rc.»)

—

Ցունվարի խաղարկութեան ժամանակ երկու հարիւր հազարը ընկել է Օդեսսայի գաւառում ծառայող գիւղական ուսուցիչ Սավչենկոյին, որը երեք ամիս շարունակ գաղտնի է պահել այդ բանը և այժմ միայն ներկայացնում է իր խաղատոմսը 200,000-ը ստանալու համար։ («Р. Сл.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մէժլիս գ. (Նուխու գաւ.), 28 մարտի

Ընթերցողները երևի կը յիշեն, որ ներկայ թուի յունվարի 25-ին «Մշակ» լրագրի միջոցով ես յայտնել էի մեր գաւառի Ղօզլու գիւղում բուն դրած մի տեսակ վարակիչ հիւանդութեան մասին։ Այդ լուրը «Մշակ» լրագրում լոյս տեսնելով արժանացաւ քանիմաց հասարակութեան ուշադրութեան. անմիջապէս Նուխուց շտապեց գալ Ղօզլու գիւղը քաղաքային բժիշկ Տէր-Յովսէփեանը։ Ինձ չաջողվեց բժշկին տեսնել, իսկ գիւղացիները պատմում էն, որ բժշկի գալը, նրա տուած անհրաժեշտ խորհուրդները ունեցան իրանց բարի հետևանքները. ինչպէս ասում են, բժիշկը այդ հիւանդութեան տիֆ (եաթաղ) է անուանել։ Դժբաղդաբար նոյն հիւանդութիւնը ներկայումս ընդարձակ ծաւալ է ստացել շրջակայ հայ և թուրք գիւղերում, մեռնողների թուից է. սովի ճանկերում տառջվող մեր գիւղական հասարակութիւնների համար այդ էլ մի նոր պատուհաս է դարձել։ Ընդհանրապէս մահանում են ծաղիկ հասակում, պատճառ դառնալով շատ ամուսինների այրեանալուն։

Այսպես Զ-ին բաղդ ունեցայ մեր մօտակայ Զայքէնդ հայ գիւղում ներկայ լինելու նոյն գիւղում նոր բացվելիք ծխական միդասեան ուսումնարանի հոգաբարձուների ընտրութեան։

Հաճաձայն Նուխու հոգ. կառավարութեան առաջարկութեան, Զայքէնդ էր ժամանել նոյն օրը մօտակայ Ղայաբաշի գիւղի Մելքիսեդեկ ք. Կարապետեանը, որը Զայքէնդի հարիւր ծուխ ժողովրդի ներկայութեամբ գիւղական ժողովատեղում, պարզ երկնքի տակ, բոլոր հասարակութեան հաճաձայնութեամբ ապագայ բացվելիք ուսումնարանի համար հոգաբարձուներ ընտրեց պ. պ. Ներսէս Մարգսեանին՝ զանձապահի պաշտօնը նոյնպէս նրան վերապահելով, Յակոբջան Յովսէփեանին, Օհան Դամրչեանցին և Յովհաննէս Տօնեանցին։

Մէժլիսի, Զայքէնդի և ընդհանրապէս Նուխու և Արէշի շատ հայ գիւղացիներ, սպասելով իրանց կենսական մթերքները, ժամէ-ժամ և օրէ-օր սպասում են մարմնաւոր իշխանութեան նպաստներին՝ մինչ առաջնակայ կալը իրանց գոյութիւնը ապահովելու։

Ա. Տէր-Գրիգորեան

—

Ղազախ, 15 մարտի

Մարտի 12-ին կայացաւ Կովկասի բարեգործութեան Ղազախ քաղաքի տեղական ճիւղի բացումը. առաջին ընդհանուր ժողովում մասնակցող անդամների թիւը հասնում էր 25 հոգու։ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց Զաքարիա քահ. Ապրեսեանցը։ Նախագահը, շնորհաւորելով ճիւղի բացումը, դիմեց ժողովին մի կարճառօտ ճառով, որի մէջ նա յայտարարում էր անդամներին չը խնայել աշխատանք ու եռանդ՝ դնելու ճիւղը հաստատուն հիմունքների վրա։ Թէև Ղազախ քաղաքի հայ հասարակութիւնը սակաւաթիւ է և մի մասը հայ-թուրքական կռիւների ժամանակ նիւթական-պէս ջնջված է, բայց ճիւղի վարչութիւնը, իբր մի պաշտօնական մարմին, հիմնվելով ընկերութեան կանոնագրութեան վրա, կը ստեղծի տեղում նիւթական աղբիւր և դրսում կը գտնի միջոցներ, որոնցով և կարելի կը լինի թէ պահպանել ծխական դպրոցը և թէ օգնել տեղական աղքատներին։

Ժողովը, մտքերի փոխանակութիւնից յետոյ մի քանի հարցերի մասին, դիմեց պաշտօնատար անձանց ընտրութեան, և ընտրը-

վեցին. 1) վարչութեան անդամներ՝ Յ. Տէր-Իսրայէլեանց (նախագահ), Զաքարիա քահ. Ապրեսեանց (քարտուղար), Դ. Բուղդանեանց (գանձապահ), Կ. Բաղդասեանց և Ա. Տէր-Յակոբեանց, իսկ փոխ-անդամներ՝ Ս. Շահ-բազեանց և Ս. Առաքելեանց. 2) վերատուչ յանձնաժողովի անդամներ՝ բժ. Յ. Սարգսեանց, Ա. Խարազեան և Պ. Ալլահ-վերդեանց։

—

Ջիրվանեանց գ. (Ղավանի շրջ.,) 10 մարտի

Ծանր է, շատ ծանր խեղճ հայ աղքատ գիւղացու արդի տնտեսական վիճակը։ Զրկվելով ամեն ինչից, տանելով ամեն տեսակ տանջանքներ ու չարչարանքներ, նա մի կերպ անցկացրեց ձմրան այս տաղտկալի երկար ու ձիգ ամիսները։ Վերջին հայ-թուրքական եղբայրասպան կռիւների միջոցին, նա տարվելով իր ամբողջ հոգով ու մարմնով դրանով, արօրն ու գութանը մոռանալով՝ ձեռք է առնում հրացանը և մի բոլէ անգամ չը մտածելով իր առած քայլերի հետևանքների մասին՝ ընկնում է գազանացած դրութեան մէջ, չը սպասելով գալիք օրերի այս թշուառ ու քայքայիչ կացութեանը։

Եւ այժմ ինչի՞ ենք ականատես, ի՞նչ ենք տեսնում. խեղճ ու թշուառ հայ գիւղացին, արիւնաքամ եղած բոլորովին և զրկված ամեն ինչից, նստած է տանը՝ գլուխը քարշ ձգած, անգործ ու պարապ։ Ոչ հաց ունի ուտելու, որ իր երեխաներին կերակրէ, ոչ կարողութիւն աշխատելու և ոչ էլ աշխատանքի միջոց։

Եւ իսկապէս որտեղից պէտք է ունենայ ուտելու հաց, քանի որ երկու-երեք տարի շարունակ բարձի-թող է արել արօրն ու գութանը, եղած պաշարը և սերմացուներն սպառել ու մի կերպ անցրել է իր վայ օրերը։

Ահա հէնց այդ սերմացուները սպառելու պատճառով, այսօր շատ-շատերը մնացել են գործից պարապ և չոր հացի կարօտ։

Իսկ փող չունենալու պատճառով էլ չեն կարողանում սերմացու ձեռք բերել։ և եթէ նոյնիսկ փող էլ է ընկնում ճանկները, նրանք աւելի շուտ աշխատում են դրսով ծածկել իրանց սուր կարիքները, քան սերմացու գնել։

Վերջապէս այս թշուառների մէջ կան և շատ-շատերը, որոնք, մասնակցելով այն եղբայրասպան կռուին, զրկվել են կամ հէնց սկզբից էլ զրկված են եղել աշխատանքի զանազան միջոցներից։ Օրինակ. ա) կան այնպիսիները, որոնք հող և գութան ունեն, բայց եզներ չունեն հողը վարելու, բ) որոնք ընդհակառակը հող ու եզներ ունեն, բայց գործիք չունեն, և գ) վերջապէս կան այնպիսիները, որոնք մի կտոր հող ունեն, բայց հողը վարելու միջոցներից բոլորովին զուրկ են։ Ահա այսպիսիներն էլ իրանց մի կտոր հողը տալիս են ուենոցին վարելու և փոխարէնը ստանում են երեքից մէկը, որը բոլորովին բաւականութիւն չէ տալիս իրանց ընտանիքին մի քանի ամիս անգամ, ուր մնաց թէ ամբողջ տարին։

Ճարները կտրած, խեղճ գիւղացիք չեն իմանում որ ջուրն ընկնեն, որ մի կերպ ազատվեն այս ցաւերից ու դարդերից։ Օգնող չը կայ, լսող չը կայ նրանց. ինչ անեն խեղճերը։

Եթէ այս բոլոր դարդերի ու ցաւերի վրա աւելացնենք և կառավարութեան հարկերն ու տուրքերը, գիւղի զանազան տըզրուկների ու ցեցերի գործ դրած մեքենայութիւնները մի կողմից և միւս կողմից էլ տգիտութիւնն ու իր աւերիչ հետևանքները, այն ժամանակ պատկերը լիակատար կերպով կը պարզվի։

Գողութիւններն ու աւազակութիւններն և ասանաւանդ հիւանդութիւնները (որոնք վերջերս սաստկացել են գլխացաւով և ջերմով) սկսել են իրանց հունձն անել։

Մօտենում է գարունը, ձիւնը հալվում. գարնանացանի ժամանակը այժմ է. ունեորը վարում է, չունեորը վայ տալիս գլխին, վայ տալիս իր վիճակին ու օգնութեան աղաղակներ բարձրացնում և լռում։ Բայց ո՞վ է լսողը, ո՞վ է ականջ դնողը. օգնող չը կայ, դարդերին դարման անող չը կայ։

Եւ այսպիսով խեղճ գիւղացին օր ու գիշեր մթնցնելով, աչքերը ջուր կտրելով, հետզհետէ դուրս է բերում տանից իր ունեցածը-չունեցածը, ծախում, չոր հացի տալիս և իր երեխաներին կերակրում։ Միւսներն էլ իրանց բաղդը օտարութեան մէջ են գտնում՝ բաժանվելով անդառնալի կերպով իրանց ընտանիքներից։

Բայց մինչև ե՞րբ այսպէս շարունակվի. չէ՞ որ հետզհետէ քայքայվում է նա և հասնում անտեսական դրութեան ամենացած ու ամենաընկած աստիճանին, որի հետևանքներն անբուժելի են մեզ համար։

Դրութիւնը կրիտիկական է։ Հարկաւոր է մեծ օգնութիւն, որպէսզի կարելի լինի փրկել դիւղացուն իր վաղաժամ մահից։

Շտապողութիւն բժշկական օգնութեան կարիքը շատ մեծ է, որովհետև վարակիչ հիւանդութիւնները, մանաւանդ հաղը, ջերմը և բկացաւը՝ քանի օրերը տաքանում են՝ այնչափ աւելի մեծ չափեր են ընդունում և զոհեր են տանում։

Ա. Ա.

—

Նուխի, 20 մարտի

Նուխին չէ կարող փայլուն տեղ չը գրաւել «յեսադիմութեան ցուցակի մէջ»։ Եթէ շնորհիւ փոքրիկ գաւառական քաղաք լինելուն և իւրաքանչիւր մանր երևոյթ աչքի զարնվելուն շանտաժը չէ առաջադիմում, բայց շանտաժից ոչ պակաս մի ախտ—ժառանգութիւնը—համաճարակել է Նուխին։

Ով ում հետ ունի անձնական հաշիւներ, թէպէտ լինի դա շատ հին, քինախնդիր հոգու քնած հրէշը զարթնում է մորմոտի տակից և մի քանի տող սխալ-մխալ գրութիւն, մի քանի կօպէկ պօստի ծախք, և արդէն ամեն ինչ կատարեալ է։ Սկսվում է խուզարկութեան շարքը։ Վերջին ժամանակներս խուզարկվել են մօտ 10 անձ։

Խեղճ արհեստաւորը, օրվայ պարէնը հազիւ-հազ ձեռք բերող չքաւոր քաղաքացին թողած արհեստանոցն ու խանութը, տընտեսապէս քայքայված իր սուղ միջոցներից մսխում է և օրն ի բուն քարշ գալիս դիւանատներում։ Իսկ սուր գօնօսչիկի սև օձի նման հոգին, կուրացած կրքերից, նոյնիսկ կանգնած մայթերի վրա ցինիկական արտայայտութիւններով հրճւում է իր առած սխրագործութիւնով։

Շատ անգամ պաշտօնեաները ստիպված են կատարել խուզարկութիւնները, որովհետև գօնօսները կրկնվում են աւելի կոսկածելի բովանդակութիւններով։

Նուխում այս բոլոր անմխիթար երևոյթների մէջ պակասում էր «գլուխ-գործոցը», այն էլ երևան եկաւ. էլ մեզ ի՞նչ է պակաս։

Ս. ք. Տէր-Պողոսեան

—

Գոմաձոր (Ն.-Բայազ. գաւ.), 18 մարտի

Այս տարվայ ձմեռվայ անսովոր երկարատևութիւնը խիստ զգալի կերպով ազդեց գիւղացու տնտեսութեանը։ 6—7 ամսվայ ընթացքում սպառվել է անասունների պաշարը, դոնէ դուռն ընկած ապրուստ է որոնում գիւղացին և ուրիշ կապիտալ չունենալով մի անասունը կիսագին վաճառում է միւսի ապրուստը ապահովելու համար։ Սպառված է դիւղացու պաշարը։ Գարունը բացվում է և նա ստիպված է աղաչանքներով վաշխառուներից կրկնակի գներով հաց և սերմացու ճարել, իսկ հնձին փոխարէնը վերադարձնել վերադիր վճարով իր ստացածի ընտիր տեսակից։ Շատ ցանկալի կը լինէր, որ իշխանութիւնը մեզ ևս օգնութեան դար հաց և սերմացու հայթայթելու։ Ահա այս վայրում ոչ պակաս սնհրաժեշտ է հացի շտեմարանների դոնէ գաղափարը մտցնել։

Ներկայումս մեզ մօտ ցորենի պուդը 1 ր. 50 կ. աւելի արժէ և շտեմանատէրերը ջանք են գործ դնում կօօպերատիվ կերպով աւելի թանգացնել սպառող գիւղացիութեան համար կենսական պիտոյքները։ Հողազուրկ գիւղացին հողը արենդով վերցնում է հարևան շատահող Ելենօվկայի մօլոկաններից։ Սրանք էլ այժմս կազմել են մանր վարկի ընկերութիւն (мелкое кредитное товарищество), և այն պարապ հողերը, որոնք առաջ ձեռնտու գներով վաճառվում էին հայերին, այժմս, այդ ընկերութեան որոշմամբ, պէտք է վաճառվեն միմիայն իւրայիններին, որոնք փողը վերցնելու են ընկերութիւնից, իսկ պարտքը վճարելու հողի արդիւնաբերութիւնից։ Կրիտիկական կը դառնայ սակաւահող հայերի դրութիւնը, եթէ այդ որոշումը իրականանայ. սակայն նրանց չքաւորները անշահաւէտ են գտնում իրանց համար այդ նպատակը, որովհետև փորձերը ցոյց են տուել, որ նրանք հողը մշակելու գործիք չունենալով ստիպված են լինում հայերի օգնութեամբ «կիսբար» վար ու ցանք անել։

Սեն. Ադելխանեան

ԸՆԴՀԱՐՈՒՄ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Պարսկական սահմանի վրա տեղի ունեցած ընդհարման առիթով «Rc.» լրագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները։ Մարտի 30-ին Բէլօսուարի բնակիչները արտակարգ հեռագրով դիմեցին Բագուի նահանգապետին և խնդրեցին օգնութիւն ուղարկել, որովհետև պարսկական աւազակները գնդակահարում էին Բէլօսուարը։

Այդ հեռագրից բացի նահանգապետը հեռագիրներ էր ստացել նաև Բէլօսուարի պօստ-հեռագրական կառավարչից, որը հաղորդում էր, որ Բէլօսուարի վրա յարձակվեցին պարսկական աւազակները, սպանեցին սահմանապահների գլխաւոր բօսմիստր Դվօյէգլազովին, և որ շատ սպանված ու վիրաւորված զինուորներ կան, նոյնպէս և Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչ Լինդենից, որով նա տեղեկացնում էր, որ Բէլօսուարի պօստ-հեռագրական բաժանմունքն ու ծառայողները մեծ վտանգի մէջ են։

Նահանգապետը անմիջապէս յանձնարարում է Զէվադի գաւառի գաւառապետին ստուգել Բէլօսուարի բնակիչների տուած տեղեկութիւնները և օգնութիւն հասցնել նրանց։

Գաւառապետն այդ առիթով զեկուցել է, որ հրացանաձգութիւնը տեղի է ունեցել բօսմիստր Դվօյէգլազովի և զօշարեգլինցիների միջև։ Դվօյէգլազովը սպանված է, սպանված ու վիրաւորվածներ կան նաև զինուորներից։ Հաղորդում են, որ դրութիւնը լուրջ է, և օգնութիւն են խնդրում։ Ապա նա յայտնում է, որ իր ձեռքի տակ գտնվող 20 կօզակներով և պահակներով ինքը ճանաչել «յեսադիմութեան ցուցակի մէջ»։ Եթէ շնորհիւ փոքրիկ գաւառական քաղաք լինելուն և իւրաքանչիւր մանր երևոյթ աչքի զարնվելուն շանտաժը չէ առաջադիմում, բայց շանտաժից ոչ պակաս մի ախտ—ժառանգութիւնը—համաճարակել է Նուխին։

Ով ում հետ ունի անձնական հաշիւներ, թէպէտ լինի դա շատ հին, քինախնդիր հոգու քնած հրէշը զարթնում է մորմոտի տակից և մի քանի տող սխալ-մխալ գրութիւն, մի քանի կօպէկ պօստի ծախք, և արդէն ամեն ինչ կատարեալ է։ Սկսվում է խուզարկութեան շարքը։ Վերջին ժամանակներս խուզարկվել են մօտ 10 անձ։

Խեղճ արհեստաւորը, օրվայ պարէնը հազիւ-հազ ձեռք բերող չքաւոր քաղաքացին թողած արհեստանոցն ու խանութը, տընտեսապէս քայքայված իր սուղ միջոցներից մսխում է և օրն ի բուն քարշ գալիս դիւանատներում։ Իսկ սուր գօնօսչիկի սև օձի նման հոգին, կուրացած կրքերից, նոյնիսկ կանգնած մայթերի վրա ցինիկական արտայայտութիւններով հրճւում է իր առած սխրագործութիւնով։

Շատ անգամ պաշտօնեաները ստիպված են կատարել խուզարկութիւնները, որովհետև գօնօսները կրկնվում են աւելի կոսկածելի բովանդակութիւններով։

Նուխում այս բոլոր անմխիթար երևոյթների մէջ պակասում էր «գլուխ-գործոցը», այն էլ երևան եկաւ. էլ մեզ ի՞նչ է պակաս։

Ս. ք. Տէր-Պողոսեան

—

Գոմաձոր (Ն.-Բայազ. գաւ.), 18 մարտի

Այս տարվայ ձմեռվայ անսովոր երկարատևութիւնը խիստ զգալի կերպով ազդեց գիւղացու տնտեսութեանը։ 6—7 ամսվայ ընթացքում սպառվել է անասունների պաշարը, դոնէ դուռն ընկած ապրուստ է որոնում գիւղացին և ուրիշ կապիտալ չունենալով մի անասունը կիսագին վաճառում է միւսի ապրուստը ապահովելու համար։ Սպառված է դիւղացու պաշարը։ Գարունը բացվում է և նա ստիպված է աղաչանքներով վաշխառուներից կրկնակի գներով հաց և սերմացու ճարել, իսկ հնձին փոխարէնը վերադարձնել վերադիր վճարով իր ստացածի ընտիր տեսակից։ Շատ ցանկալի կը լինէր, որ իշխանութիւնը մեզ ևս օգնութեան դար հաց և սերմացու հայթայթելու։ Ահա այս վայրում ոչ պակաս սնհրաժեշտ է հացի շտեմարանների դոնէ գաղափարը մտցնել։

Ներկայումս մեզ մօտ ցորենի պուդը 1 ր. 50 կ. աւելի արժէ և շտեմանատէրերը ջանք են գործ դնում կօօպերատիվ կերպով աւելի թանգացնել սպառող գիւղացիութեան համար կենսական պիտոյքները։ Հողազուրկ գիւղացին հողը արենդով վերցնում է հարևան շատահող Ելենօվկայի մօլոկաններից։ Սրանք էլ այժմս կազմել են մանր վարկի ընկերութիւն (мелкое кредитное товарищество), և այն պարապ հողերը, որոնք առաջ ձեռնտու գներով վաճառվում էին հայերին, այժմս, այդ ընկերութեան որոշմամբ, պէտք է վաճառվեն միմիայն իւրայիններին, որոնք փողը վերցնելու են ընկերութիւնից, իսկ պարտքը վճարելու հողի արդիւնաբերութիւնից։ Կրիտիկական կը դառնայ սակաւահող հայերի դրութիւնը, եթէ այդ որոշումը իրականանայ. սակայն նրանց չքաւորները անշահաւէտ են գտնում իրանց համար այդ նպատակը, որովհետև փորձերը ցոյց են տուել, որ նրանք հողը մշակելու գործիք չունենալով ստիպված են լինում հայերի օգնութեամբ «կիսբար» վար ու ցանք անել։

Սեն. Ադելխանեան

ԸՆԴՀԱՐՈՒՄ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

—

15 տարեկան, որոնք մեղադրվում են Նարանում, որ 1907 թ. օգոստոսի սկզբին Անապա քաղաքում, տեղական վաճառական Եատրօպուլոյի խանութի վրա զինված յարձակում գործելու և 300 ռուբլի ու 200 հատ փամփուշտ յափշտակելու մէջ։

—

Կովկասեան զինուորական-նահանգական դատարանը կայացրել է հետևեալ դատավճիռները. 1) զինուոր Կոնստանտին Զուլիովին, որ մեղադրվում էր զինուոր Խաբարովին սպանելու մէջ,—մահվան պատժի կախաղանով։ 2) Յովհաննէս Յակոբեանին մահվան պատժի կախաղանով—Թիֆլիսում, Միրզոյեվների բաղանիքի կասիրին սպանելու համար։ 3) Դաւիթ Կալիաշվիլուն մահվան պատժի կախաղանով—Սուխումում պրիստաւ Սվօրիկովին սպանելու համար։ («Լ.»)

—

Ապրիլի 8-ին Թիֆլիսի նահանգական դատարանում հինգերորդ անգամ նշանակված է իշխ. Ամիլախվարու վրա 1907 թ-ի ամառը ռումբ նետելու մէջ մեղադրվող Զուբինովի, Զուբաշվիլու և Մաչավարիանու գործը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիսի քաղաքային զինուորական ատեանը ապրիլի 15-ից կը ձեռնարկէ կազմելու այն նորակոչիկների ցուցակը, որոնք այս տարվայ հոկտեմբեր ամսին կանչվելու են զինուորական ծառայութեան։ Նրանք, որոնք որոշ արտօնութիւններ ունեն կամ ընտանեկան կամ կրթական դրութեամբ, պարտաւոր են այդ մասին գրաւոր կերպով յայտարարութիւն տալ մինչև այդ օրը զինուորական ատեանի անունով։

✦ Թիֆլիսում տիֆ հիւանդութիւնը թուլանում է։ Քաղաքային բարակներում այժմ գտնվում են 13 հիւանդներ միայն։ Վերջին շաբաթ հիւանդացել են 3—4 հոգի։

✦ Երեքշաբթի, ապրիլի 1-ին, բժ. Լունդվիչի նախագահութեամբ, կայացաւ Կովկասեան բժշկական ընկերութեան հերթական նիստը։ Դամբուրգէր զեկուցեց ատամոքսի հիւանդութիւնների մասին։ Ընկերութեան քարտուղար Մուխարինսկին կարդաց Վ. Լէդոմսկու զեկուցագիրը՝ Թոքախտի մասին։ Ապա Գօլովը դասախօսեց ատամի մասին։ Ժողովը բոլոր զեկուցանողներին շնորհակալութիւն յայտնեց։ Վերջում ժողովը որոշեց ընկերութեան ընդհանուր տարեկան ժողովը գումարել ապրիլի 23-ին, իսկ դրանից յետոյ նշանակել ևս մի վարչական նիստ՝ պաշտօնական անձեր ընտրելու համար։

✦ Այսօր երեկոյեան տեղի կունենայ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան նիստը, ուր ընտրվելու են պաշտօնական անձինք։

✦ Մարտի 29-ին, Թիֆլիսի ոստիկանութիւնը, Աւճալեան փողոցում, № 14 տանը, մի վարսավիրի խանութում ձերբակալել է 17 սօցիալ-յեղափոխականների, որոնց մօտ դռել է շատ զէնքեր։

✦ Թիֆլիսի գաւառական մասնաժողովը իր գործունէութեան օրից գնել է 5909 պուդ ալիւր 9749 ր. 85 կօպէկ արժողութեամբ, որը և բաժանել է գաւառի գիւղացիներին. բացի յիշեալ գումարից մասնաժողովը զանազան ծախքեր կատարել է 200 ր.։ Նա ստացել էր ընդամենը 17000 ր., որից, ծախքը հանելով, ներկայումս մասնաժողովի մօտ առձեռն մնում է 7050 ր. 15 կ.։ Թիֆլիսի նահանգական յանձնաժողովը գնել է 15000 պուդ ալիւր, պուդը 1 ր. 73 կօպէկով։ Յանձնաժողովը ցորեն բաժանում է իւրաքանչիւր շնչին երկու ամսվայ համար, բացառութեամբ ուլարցի և մուխրավանցի գիւղացիների, որոնց իւրաքանչիւրը շնչին տալիս է 3 ամսվայ համար։

✦ Թիֆլիսի առևտրա-տնտեսական գլխաւոր կառավարիչը քաղաքային վարչութեան մի յայտարարութիւն է ներկայացրել, որով գտնում է, որ անհրաժեշտ է Թիֆլիսում ամեն տարի մայիսին ձիերի ոստնավաճառ տարքել, որովհետև այդ տոնավաճառներին ոչ մի ձի չէ ծախվում։

✦ Առևտրական դպրոցի ութերորդ դասատան աշակերտները մարտի 28-ին տեսչի ղեկավարութեամբ այցելեցին Դիտրիխի գարեջրի գործարանը, ուր գործարանատիրոջ սիրալիր աշակցութեամբ ծանօթացան գարեջուր պատրաստելու մանրամասների հետ։ Նոյն աշակերտները մարտի 30-ին այցելեցին Ազօվ-Դօնեան բանկը և բանկի կառավարչի սիրալիր թոյլտուութեամբ ու բանկի ծառայողների աշակցութեամբ գործնական ծանօթացան բանկային գլխաւոր գործողութիւնների հետ։

✦ Ինչպէս յայտնի է, մի քանի օր առաջ մի պայմանագիր կապվեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան և էլեքտրաքարշի ընկերութեան միջև, որի համաձայն էլեքտրաքարշի ընկերութիւնը պարտաւոր էր ապրիլի 1-ից մտցնել վագոնների ամարային երթևեկութիւն։ Սակայն այդ օրը քաղաքային վարչութիւնը լիակատար կազմով էլեքտրաքարշի մասնաժողովի նախագահի հետ միասին տեսաւ, որ վագոնների երթևեկութիւնը սովորական ժամանակամիջոցից կէս ժամով առաջ դադարեց, այսինքն վերջին վագոնը Երևանեան հրապարակից փոխանակ դուրս գալու գիշերվայ 11½-ին դուրս եկաւ ժամը 11-ին։ Հէնց այդ հանգամանքն էլ պատճառ դարձաւ, որ քաղաքային վարչութիւնը տուգանք առնէ ընկերութիւնից պայմանագրի ոյժով։

✦ Մօտիկ ապագայում Թիֆլիսում սպասվում է գլխակնագէտ Արարաժինը, որ մի շարք դասախօսութիւններ է կարդալու ռուսաց գլխակնութեան մասին կովկասագիտական բարձր դասընթացքներում։

✦ Թիֆլիսի անիտարական-բժշկական խորհուրդը, քննելով ձայնաւոր Քանանեանի յայտարարութիւնը՝ Թիֆլիսում 2-րդ ծննդաբերական ապաստարան հիմնելու մասին, ապաստարան հիմնելը վաղաժամ համարեց, նկատի առնելով որ քաղաքը միջոցներ չունի անգամ արդէն սարքված Արաժեան հիւանդանոցը բանալու համար։

✦ Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում Ի. Նակաշիձէն կը դասախօսէ Մելնիայի և Ս. Կիպիանու գրուածքների իւմորի մասին ռուսերէն լեզուով։

✦ Գրաքննական կօմիտէի առաջարկութեամբ, Կովկասի Փոխարքան արգիլել է ներկայացնել Իվ. Գօմարտելու 4 գործ. «Շալիոն» դրաման։

✦ Թիֆլիսի էլեքտրաքարշի վերատեսուչը կօնդուկտորներին հրամայել է այսուհետև թոյլատրել վագոնների առաջին մասում կանգնել չորական հոգու։

✦ Մօտ օրերս Թիֆլիսում կայացաւ ֆելդշերների և ֆելդշերուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան ժողովը։ Ժողովը մի յատուկ մասնաժողով ընտրեց մի կանոնադրութիւն մշակելու ֆելդշերների և ֆելդշերուհիների թաղման գանձարկղ հիմնելու համար և մի ծրագիր մշակելու Թիֆլիսում բացվող դպրոցի համար, ուր լրացուցիչ կերպով ֆելդշերները և ֆելդշերուհիները պատրաստվելու են իրանց արհեստում։ Վերջում կայացան ընտրութիւնները։ Ընկերութեան նախագահ ընտրվեց Ֆօյ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Ներքին գործերի մինիստրութեան մէջ շտապով պատրաստում են ներկայումս մի զեկուցում երկրորդ հաժառուական վիճակագրութեան մասին։ Վճռված է վերջացնել այդ վիճակագիրը 1910 թ-ին։ Դրա ծախքերը հոգալու համար պահանջվում է մօտ 10 միլիոն ռուբլի, որը կը մտցվի զեկուցման մէջ և կը ներկայացվի Դումային ի հաստատութիւն։ («Р. У.»)

✦ Պետերբուրգում նորերս պրոֆ. Ֆէօդորով, Օգերով, Մորուվէ, Եանժուլ, Կուտլէր, Շեպով և ուրիշները հիմնել են ֆինանսական բարենորոգութիւնների ընկերութիւն։

✦ Ռուս ժողովրդի միութիւնը կարգադրել է իր բաժանմունքներին Զատկի առաջին օրերը համաժողովրդական ցոյց սարքել նախօրօք մշակված ծրագրով։ («Б.»)

✦ Ռուս ժողովրդի միութեան կուսակցութիւնից զատված խմբակը ներկայումս պատրաստում է նոր մերկացումներ անել միութեան մարտական խմբերի մասին՝ ցոյց տալու համար, որ նրանք մեղսակից են Հերցենշտէյնի և Իոլլոսի սպանութիւններին։ («Б.»)

✦ Վճռված է արգելել Պետերբուրգի ակումբներում բոլոր աղաբանի թղթախաղերը ու լոտոները և Թոյլ չը տալ կանանց՝ խաղաղութիւնները մտնելու։ («К. М.»)

✦ Եւրոպական գինանակի հռչակ վայելող Ի. Ի. Մեչնիկովը, որ վաղուց արդէն պատուաւոր դատաւոր է Օդեսայում, մարտի 25-ին քաղաքային դումայի ընտրութիւնների ժամանակ սկսաց։ Ռուս ժողովրդի միութիւնը առաջարկել է քաղաքային վարչութեան հեռացնել քաղաքային ծառայութիւնից բոլոր հրեայ ծառայողներին, մինչև իսկ մկրտվածներին։ Այդպիսի ծառայողների թիւը 60-ի է հասնում, գլխաւորապէս բժիշկներ, որոնք տասնեակ տարիներ է որ ծառայում են քաղաքին։

(«Р. Сл.»)

✦ Երդուեալ-հաւատարմատարների խորհուրդը արգելել է երդ.-հաւատ. Գիլլերսօնին ընդունել այն մենամարտի առաջարկը, որ արել էր վկայ-պրապօրշչիկը՝ վիրաւորված զգալով իրան դատարանի առաջ Գիլլերսօնի ասած մի քանի խօսքերից։ Այդ արգելքը պատճառաբանվում է նրանով, որ մի գուցէ այդպիսի մի միջադէպ կարող է վանգաւոր լինել դատավարութեան աղաւաղութեան համար։ («Касп.»)

✦ Առաջին Պետական Դումայի նախկին անդամ «Товарищъ» լրագրի աշխատակից յայտնի ժուրնալիստ աշխատաւորական Թիլկինը այժմ մտել է խաղաղ վերանորոգչականների օրգան «Слово»-ի խմբագրական կազմի մէջ, որը լոյս է տեսնում նախկին մինիստր Մ. Ֆէօդորովի խմբագրութեամբ։ («Касп.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Ապրիլի 1-ի Նիստը

Նիստը բացվում է ժամը 8 և 45 րօպէին։ Նախագահում է իշխ. Վօլկոնսկին։ Մինիստրների օթեակումն է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը։

Ամուրեան երկաթուղագծի մասին, նախկին որոշման համաձայն, խօսելու են միայն 6 հռետորներ։

Վօլկով II մանրամասն կանգ է առնում երկրի հետազօտութեան և գծի կառուցման անհրաժեշտութեան վրա։

Բուլատը աւելորդ է համարում մանրամասնութիւնների մէջ մտնել։ «Նրանք միայն հարցը մթնացնում են։ Եթէ հապօնացիները ցանկանում են վերցնել Ամուրեան շրջանը, նրանք այդ կարող են անել այժմ էլ, քանի որ Արևելքում հապօնացիները աւելի ուժեղ են մեզանից։ Երկաթուղագծի համար յատկացրած փողերը ծախսեցէք ներքին բարենորոգումների վրա և ժողովուրդը կամրանայ այնպէս, որ նրան չեն վախեցնի թշնամիները ոչ Արևելքից, ոչ Արևմուտքից»։ Վերջում հռետորը յայտնում է, որ աշխատաւորականները այժմ, այժմեան պայմաններում, չեն կարող երկաթուղու կառուցման հետ համաձայնել։

Կուլպենսկին ասում է, որ երկաթուղու կառուցումը բնաւ ագրեսիվ նպատակների հետամուտ չէ։ «Մեր երկիրը ընդարձակ է և առատ, սակայն կարգ ու կանոն նրա մէջ պակասում է (ծափահարութիւն ձախակողմից)։ Այո, մենք պէտք է կարգ ու կանոն մտցնենք այնտեղ, ուր ձախակողմեանները անկարգութիւններ են սարքում (ծափահարութիւն կենտրոնում)։ Ոչ թէ ագրեսիվ նպատակներով է երկաթուղին կառուցվում, այլ հարուստ երկիրը զարգացնելու համար։ Եթէ երկաթուղին կառուցվելու է ռուս բանուորների և ռուս կապալառուների ձեռքով, նշանակում է գծի վրա գործադրվող փողերը կը մնան Ռուսաստանում, իսկ այդ բանը, պետական տեսակէտից, օգուտից աւել՝ վնաս չի բերի»։

Կրոպոսօվը կարծում է, որ սկզբում հարկաւոր է ոսկին գտնել, յետոյ արդէն այդ ոսկով երկաթուղին կառուցել։ Պետութեան մեծութիւնը, հզօրութիւնը ժողովրդի բարեկեցութեան մէջ է։

Գերցենվիդը այն եզրակացութեան է յանգում, որ երկաթուղու կառուցման ծախքերը պէտք է կատարել մեծ խնայողութեամբ և միևնոյն ժամանակ կառուցման աշխատանքների վրա հսկող յանձնաժողովը պէտք է բաղկացած լինի ընտրեալ մարդկանցից։

Շինգարեով ասում է, որ ամուրեան երկաթուղին անշուշտ հարկաւոր է, սակայն աւելի լաւ չէ՞ լինի, որ այժմ ժողովրդի վրա նոր հարկային բեռ չը բարձվի։ «Ամեն տարի, երբ դուք մեզ կասէք, թէ պետական գանձատան դրամական միջոցները շատ սուղ են, որ դուք գժուարանում էք փող յատկացնել այս կամ այն նպատակի համար, մենք ձեզ կը յիշեցնենք՝ «իսկ ամուրեան երկաթուղին» (ծափահարութիւն ձախակողմում և ծիծաղ աջակողմում)։

Ընդհանուր վիճաբանութիւնները սպառված են։

Մասնաժողովի զեկուցանողներ Մարկով I և Սավիչ վերսին հաստատում են երկաթուղու ռազմական և անտեսական անհրաժեշտութիւնը, վկայելով որ մասնաժողովի մէջ զինուորական վարչութեան ներկայացուցիչները դրականապէս յայտնեցին, որ երկաթուղին անհրաժեշտ է Պրիամուրեան շրջանի պաշտպանութեան համար, և ֆինանսների մինիստրը, բացատրելով ֆինանսական քաղաքականութիւնը, նկատի ունէր այդ ծախքերի անխուսափելիութիւնը։ Ճանապարհների հաղորդակցութեան մասնաժողովը խնդրում է օրինագիծը հերթական համարել։

202 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 100-ի օրինագիծը ճանաչվում է հերթական։

Ապա նախագահը յայտնում է, որ 32 անդամների ստորագրութեամբ մի առաջարկութիւն է ներկայացված, որով խնդրվում է անցնել յօդուածային ընթերցման, եթէ դա ընդունվի բացարձակ ձայնաւորութեամբ։

Մաքերի հակիրճ փոխանակութիւնից յետոյ, 113 ձայնով ընդդէմ 101-ի, 4-ի ձեռնպահութեամբ և 125-ի բացակայութեամբ, Դուման որոշում է անցնել օրինագծի ընթերցման յօդուած առ յօդուած։

(Երկարաև և աղմկալից ծափահարութիւն կենտրոնում և աջակողմում)։

Դումայի քարտուղարը կարդում է օրինագծի առաջին յօդուածը. «Թոյլատրել ամուրեան երկաթուղագծի կառուցումը իր ամբողջ տարածութեամբ Զաբայկալի երկաթուղագծի Կուէնգա կայարանից մինչև Խաբարովսկ՝ դէպի Ներչինսկ և Ամուր գետը տանող ճիւղերով, պետական գանձատան միջոցներով և կարգադրութեամբ, ձեռնարկելով կառուցմանը 1908 թ-ին»։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը այդ յօդուածի վերաբերութեամբ առաջարկել է հետևեալ ուղղումը. «Կուէնգա» խօսքի փոխարէն դնել «Ներչինսկ» խօսքը և «դէպի Ներչինսկ» բառերը բոլորովին դուրս ձգել»։

Կուէնգինսկի վարիանտը պաշտպանում են Մարկով I-ը և Նեկրասովը։ Ներչինսկի վարիանտը պաշտպանելու հանդէս է գալիս կոմս Ուվարով, Բաստրդուլով և ճանապ. հաղորդ. մինիստրը։

Քուէարկութեամբ բոլոր ուղղումները մերժվում են։ առաջին յօդուածը ընդունվում է մասնաժողովի առաջարկած խմբագրութեամբ։

Մնացած յօդուածները ընդունվում են առանց վիճաբանութիւնների։

Օրինագիծը ընդունվում է երկրորդ ընթերցումով և յանձնվում է խմբագրական մասնաժողովին։

Ապա ընդունվում է հոկտ. 17-ի միութեան առաջարկած հետևեալ պատճառաբանված բանաձևը.

«Քննելով պետական այդօրինակ կարևոր նշանակութիւն ունեցող օրինագիծը, որ այդօրինակ խոշոր զոհողութիւններ է պահանջում պետական գանձատնից. հաւատ յայտնելով որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մասնաղնին ուշադրութիւն կը դարձնէ այն անձանց ընտրութեան վրա, որոնց յանձնվելու է աշխատանքների գործադրութիւնը, նրանց կը դնէ այնպիսի կանոնաւոր պայմանների մէջ, որոնք կապահովեն ամբողջովին աշխատանքների աջողութիւնը և ամեն միջոց ձեռք կառնէ, որպէսզի երկաթուղին կառուցվի բացառապէս ռուս բանուորների աշխատանքով. ցանկալի համարելով—եթէ դա հնարաւոր լինի—երկաթուղագծի կառուցման գործին մասնակից անել սապէոր և երկաթուղային բատալիոնները. անհրաժեշտ ընդունելով, որ այդպիսի խոշոր երկաթուղային ձեռնարկութեան կառուցումը կատարվի ամենաիրական հսկողութեան պայմանով,—Դուման անցնում է հերթական գործերին»։

Այս բանաձևին աւելացնելու համար ընդունվում է աջակողմեանների առաջարկած լրացուցիչ նկատողութիւնը, այն է՝ որ Պրիամուրեան շրջանը անպատճառ բնակեցվի ռուսներով։

Ընդունվում է Զատկից առաջ մի նիստ ևս գումարել ուրբաթ, ապրիլի 4-ին։

Գիշերվայ ժամը 2 և 36 րօպէին նիստը նախագահը յայտարարում է փակված։

(«Հ. Գ.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ղազախ, 14 մարտի

Թոյլ տուէք պատական թերթիդ միջոցով շնորհակալութիւն յայտնել դաշնակցական Բեազում աղա Քեալբալայեվին և Ղազախում ապրող ասորի Գէօրգի Մարգիսօվին, որոնք աչքի առաջ ունենալով մեր ծխական դպրոցի նիւթական սուղ դրութիւնը՝ ինքնաբերաբար նուիրել են—առաջինը 6 ռուբլի, իսկ երկրորդը երեք ռուբլի։

Զաք. ք. Ապրեսեան

—

Հին-Նախիջևան, 30 մարտի

Լ. Նազարեան գրչակը յանդգնել էր ցեխ շպրտել պ. Հ. Առաքելեանի հասցէին, իբր թէ նրան վարկաբեկելու համար։ Շատ աղող է որակել նրան Թիֆլիսի ժուրնալիստների ժողովը՝ Գուրիշկեվիչ (աւելի լաւ է կրուշեվան) անունով մկրտելով նրան։ Այդ խլուրդը «Возрожденіе» թերթի լոյս տեսնելու սկզբի ամիսներում նրա հայկական բաժնի կազմողը, խմբագրողն է եղել։ Նա մի գլուխ մերկացնում էր հայերի միայն զազկասաւոր կողմերը. երբէք մի լուսաւոր երևոյթ չէր քաղում հայ թերթերից, հայ կեանքից, այլ միայն հայ անունը վարկաբեկող երևոյթներ էր արձանագրում։ Լաւ էր մասամբ, որ մեր «ազգի փրկիչները» ստեղծեցին «Ցառաջը» և նա մտաւ նրա խմբագրութեան կազմի մէջ ու նրա ժոլոր ալիքների մէջ կորաւ։ Հայկական բաժինը, ինչպէս կազմում էր այդ խլուրդ Լ. Նազարեանը, միայն տխրահոտ Վելիչկօն կարող էր այդպէս կազմել։ Եւ այդպիսի դատանները մամիտների կողմից կոչվում են հայ գրիչներ... Ուեղմ հայ ազգ և խեղճ հայոց գրականութիւն և լրագրութիւն, ուր տեղ են գտնում Լ. Նազարեանի նման գրչակները և համբակները։

Արշակ Եգիազարեան

—

Գանձակ, 7 մարտի *)

Դնում եմ այստեղ ինձ ուղղված պաշտօնական գրութեան մի կտորը, որը պատասխան է իմ տուած բողոքին ս. Յովհ. եկեղեցու հոգաբարձութեան ապօրինի գործողութիւնների մասին, և հոգևոր կառավարութեան անտարբեր վերաբերմունքը և մատնանները ուշացնելը՝ մեզ յանձնելու վերաբերութեամբ։ Նա գրում է. «Պարտ իսկ էր իմանալ նա ինքնին Վերդանցը ի թեմական ատենէն, եթէ յիրաւի հետաքրքրիւր պաշտպանութեամբ զննութեան հաշոյց եկեղեցւոյն, և ոչ թէ լռութեան տալով քանի մի ամիս՝ յետ այնորիկ միայն ներկայ լոկ հաշուով եկեղեցւոյն»։

Աւելորդ չենք համարում մի փոքր էլ կանգ առնել նոյն ս. Յովհաննէս եկեղեցու հոգաբարձութեան գործունէութեան վրա, և այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչ տիպի գործիչներով է շրջապատված մեր տիպի գործիչներով է շրջապատված մեր հասարակութիւնը։

Ինչպէս յայտնի է, 1906 թ. ծխական կանոնադրութեան 74-դ յօդ. հանձայն եկեղեցական կայքերի կառավարութեանը բացի երեցփոխներից պատասխանատու են նաև հոգաբարձուները։ Ուրեմն սպասվում էր, որ գոնէ դրանից յետոյ այդ կայքերի կառավարելը հանելով երեցփոխի ձեռքից և ենթակելով հոգաբարձութեան հսկողութեանը, կը վերանան այն խրօնիքական բնոյթ ստացած գործունէութիւնն ու շահատակութիւնները, որոնցով այնքան հարուստ է մեր երեցփոխանների տարեգրութիւնը։ Բայց արի տես, որ այդ նոր փոփոխութիւնն էլ չէ վերացնում չարիքը։ Դարձեալ նոյն ծախսերի քաօսային վիճակը, որին իբրև ապացոյց կարող է ծառայել ս. Յովհ. եկեղեցու հոգաբարձութեան պատասխան - գրութիւնը, 20-ն յունիսի 1907 թ. № 9, ուղղված նոյն ս. Յովհ. եկեղեցու վերաստուգող յանձնաժողովի գրաւոր առաջարկած պ. երեցփոխ Ս. Բաբաքեխանի 1906 թ. մատեանի ծախսերից մի քանի մութ կէտերի լուսաբանութեան համար։

Հարցնում ենք հոգաբարձութեան՝ 1) թէ ինչու է փաստաբանին փող տուած. հոգաբարձութիւնը պատասխանում է, թէ փաստաբանին վճարված է մարկաների կօպեյանների ծախս, զանազան ներկայացնելու դատարանին, մուրհակով տուած ժամանաւոր անձերից եկեղեցական գումարներ ստանալու համար։ Թէ ինչ ժամանաւոր անձեր են, որոնց անունը չէ ուզում տալ, կամ նրանցից որքան գումար պէտք է ստանալ մուրհակով, որ թուից,—այդ հոգաբարձութիւնը չէ պարզում։ Հոգաբարձութիւնը մի տարբերական բան է ասում, որ դատարանում գործ վարելու համար փող է հարկաւոր, բայց մեր իրաւաբան ու մանկավարժ հոգաբարձուները իրանց անմիջական պարտականութիւնը չեն հասկանում, այն է՝ թէ արդեօք երէցփոխը կամ հոգաբարձութիւնը իրաւունք ունի՞ եկեղեցու փողը մուրհակով մանաւոր մարդկանց տալու։ Բացի դրանից. զարմանալին այն է, որ եկեղեցական գանձատների համար ծախսերի փող են տալիս, մինչդեռ օրէնքով այդ ծախսերից ազատ է եկեղեցին։

2) Առաջարկվում է ուղարկել եկեղեցական շարժական և անշարժ կայքերի ցուցակը, կրպակների պայմանագրերը և 1906 թ-ի նախահաշիւը։ Հոգաբարձութիւնը պատասխանում է, թէ «նախկին հոգաբարձութիւնը չէ յանձնել ներկայ կազմին 1906 թ. նախահաշիւը, իսկ ներկայ կազմը, որ հաստատված է 1906 թ. օգոստոսին, գործերը վարել է ընթացիկ կերպով, առանց նախահաշիւի, նոյնպէս և չէ ստացել անշարժ կայքերի ցուցակը և պայմանագրերը 1906 թ. համար. իսկ ներկայ կազմը պատասխանատու է օգոստոսից սկսած հաշիւներին»։

Ս. Յովհ. եկեղեցու հոգաբարձութիւնը չէ հասկանում, որ եթէ նախկին հոգաբարձութիւնը որևէ ապօրինութիւն է կատարել, այդ իրանց իրաւունք չէ տալիս նոյնը կրկնել։

(Կը շարունակվի)

ՄԱՄՈՒԼ

«Գործ» երկշաբաթաթերթի վերջին երկու համարներում (№ № 3 և 4) տպված են պ. Բ. Ի.-ի յօդուածները «Հայոց կաթողիկոսութեան հասարակական արժէքը» վերնագրով։ Մամուլի պարտաւորութիւնը լինելով ժողովրդական կեանքի մէջ երևցած ամեն մի նշանաւոր հարցի մասին լիակատար լուսաբանութիւն տալու, մենք հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին և այն հայեացքների հետ, որոնց հետ մենք համաձայն չենք կամ վիճելի ենք համարում։

Յօդուածագիրն այսպիսի հարցեր է դնում.

Ո՞ւմ է պէտք արդեօք հայոց կաթողիկոսութիւնն ու կաթողիկոսը և ինչո՞վ է պէտք նա։ Ո՞ր գասակարգային կատեգորիան է շահագրգռված եկեղեցու և եկեղեցապետի անխախտ դիրքութեամբ։ Ունի՞ արդեօք հայոց կաթողիկոսութիւնը գոյութեան որոշ իմաստ, հասարակական արժէք, իրական կեանքում այս կամ այն պահանջներին բաւարարութիւն տալու ոյժ և կենսունակութիւն։

Հարցն այսպէս դնելով, յօդուածագիրն աշխատում է լուծել համաձայն այն տեսակէտների և հայեացքների, որոնք յատուկ են սօցիալիստական ուղղութեան և ոգունս նա գտնում է, որ եկեղեցին իր ներկայ կազմակերպութեամբ խոշոր բուրժուազիայի տիրապետութեան ծառայող նեցուկներից մէկն է, որ եկեղեցին և հայ բուրժուազիան, իբրև մեր դեմքում տիրող երկու հասարակական մեծութիւններ, օժտված են առաջինը՝ տնտեսապէս և ֆինանսապէս, այսինքն ունի տիրապետութեան բեկ հիմքեր, նիւթական փաստօրներ, միւսը՝ հայ կաթողիկոսութիւնը, օժտված է իրաւապէս տրադիցիօնալ հեղինակութեամբ և բոլոր խորհրդաւորութեամբ ռամկամիտ մասսայի աչքում, այսինքն ունի տիրապետութեան իդէական հիմքեր, իդէօլոգիական փաստօրներ։

Ապա, իր երկրորդ յօդուածում, հեղինակը կանգ է առնում այն երկդիմի, տատանում և երերում դիրքի վրա, որ բռնել է «Դաշնակցութիւն» կոչված կազմակերպութիւնը կաթողիկոսական խնդրում, այն հակասութիւնները, որոնց մէջ նա ընկել է, ձգտելով մի կողմից սօցիալիստ, միւս կողմից հանդէս գալով իբրև եկեղեցու և կաթողիկոսական ինստիտուտի պաշտպան։ Կը ժամանակէ՞ կաթողիկոսական ընտրութիւններին Դաշնակցութիւնը—այս հարցին յօդուածագիրը հետևեալ պատասխանն է տալիս.

Նա (Դաշնակցութիւնը) չի ասի այս (մասնակցելը) կամ հակառակը (չը մասնակցելը) ամբողջովին, որովհետև նրան անհրաժեշտ է մասամբ մասնակցել և մասամբ չը մասնակցել. նա չէ կարող ամբողջապէս մասնակցել կամ ամբողջապէս չը մասնակցել, որովհետև նրան անհրաժեշտ է մասամբ այս ասել, մասամբ հակառակը։

Մենք կաթողիկոսական հարցի և եկեղեցու վրա ամենեին չենք նայում դասակարգային տեսակէտից. մենք չէինք ցանկանայ բնաւ, որ հայոց եկեղեցին և կաթողիկոսութիւնը ծառայեն բուրժուազիական շահերին, բուրժուազիայի տիրապետութեան, այլ որ նրանք ծառայեն բուն ժողովրդի, հայ մասսայի շահերին, քանի որ քրիստոնէական եկեղեցին իր ուսմամբ, իր գաղափարներով ընդունակ է և կոչված է նոյն իսկ ծառայել ժողովրդի, մասսայի շահերին, ազատաւորել նրա հոգևոր, բարոյական և մտաւոր պահանջներին։ Ընդունում ենք, որ

*) Տես «Մշակ» № 67.

կաթողիկոսութիւնը աւելի շատ ծառայել է ի դէմս բազմաթիւ կաթողիկոսների և մասնաւանդ Երիմեանի՝ բուրժուազիայի շահերին, հարուստներին. բայց դա դեռ չէ նշանակում, թէ հայոց եկեղեցու պէս մի դժուկրատական հաստատութիւնը չէ կարելի չը դարձնել գործօն՝ ժողովրդի շահերին ծառայող։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ՄԱՔՍ ՎԻԼՀԵԼՄ ՎՈՒՆԴ *)

—

Կանտը շատ ճշտօրէն մի անգամ նկատել է, որ Արիստոտելից յետոյ մինչև իր ժամանակները տրամաբանութիւնը (լոգիկան) ոչ մի քայլ առաջ չէ արել. նոյնը կարող է Վունդն ասել, որ մինչև իր օրերը լոգիկան կանոնաւորապէս—գիտականօրէն չէ մշակվել և այն բարձրութեանը հասցվել, ինչպէս իր միջոցով։ Նա առաջին անգամ հանճարեղութեամբ քննում և պարզում է այն խնդիրը, թէ գիտութիւնները խաղցութեան առաջացմանը ինչ մեթոդներով են հասնում, այսինքն ինչ տրամաբանական մեթոդներ են գործադրում այդ իմացութիւնները գտնելու և նրանց հասնելու համար և թէ ինչ առանձին մեթոդներ են գործադրում ստացած եզրակացութիւնները գիտականօրէն դասաւորելու համար։ Եւ մի մարդու համար ապշեցուցիչ կարողութեամբ քննում է բոլոր, կրկնում ենք, բոլոր գիտութիւնների մեթոդները։ Ապագային ենք թողնում, թէ ինչպէս նոր փորձեր են լինում Վունդի այս ուսումնասիրութիւնների վրա հիմնել դասաւանդման թէօրիան—դիտակտիկան։ Եթէ մեզ մօտ այս բոլորը յայտնի լինէր, կարծում ենք, տրամաբանութիւնը արհամարհված գիտութիւն չէր նկատվիլ և թեմականներից նրա դասաւանդումը դուրս չէր վռնտվի, այլ հարկաւոր ուշադրութեան կարժանանար։

Մի քանի խօսք ևս Վունդի էտիկայի (բարոյագիտութեան) մասին, որով մեր դրած խնդիրը, ծանօթացնել Վունդի մի քանի գործերի հետ, լրացած կը համարենք։ Անհատը, ըստ Վունդի չէ կարող բարոյականի օբիէկտը, նպատակը նկատվել. անհատների իդէալները պէտք է լինեն հասարակութեան և մարդկութեան, ընդհանուրի առաջադիմութեան և դրա հետ կապված իդէալները։ Վունդի համար ոչինչ է անհատական բաղդը և հաճոյքը այն մեծ բարոյական իդէալների առաջ, որը ունի իր վրա վերցրած ընդհանրութիւնը։ Ամեն մէկը պէտք է աշխատէ հոգու օբիէկտացման այդ գործին, որը ամփոփած է իր մէջ բոլոր բարոյական նպատակները։ Անհատը ոչնչանում է, հասարակութիւնները ոչնչանում են, սակայն բոլորիս պէտք է այն իդէան շաղկապէ, որ մենք աշխատում ենք մի ընդհանուր գործի համար, մաքրված կուլտուրայի և այդ մեծ իդէայի շուրջը, կապակցվում են պատմական պերիոդները։ Ներկայիս մեր հայեացքը ուղղում ենք շատ հեռու ապագաները և ուրախանում ենք ապագայի մեծ սոցիալական հասարակութիւնների կարելիութեան յուսով, որոնց հետ մենք կապված ենք բարոյական նը-պատակներով։ Եւ եթէ նոյնիսկ այդ հեռաւոր իդէական պատկերները մեր աչքից անյայտանում են, մեզ ոգևորում է գոնէ այն յոյսը, որ կան հոգման, բարոյական նպատակներ, որոնք և ոչ մի անգամ ոչնչանալու չեն, քանի կայ մարդկութիւնը։ Դեռ շատ երկար կարելի է խօսել Վունդի բարոյագիտութեան մասին, նրա կարծիքը սեփականութեան, ընտանիքի, տէրութեան, անհատի և հասարակութեան, ներկայ կապիտալիզմի և սոցիալական խնդրի, էտիկայի և իր մթնոլորտի և այլ նման հարցերի մասին. սակայն անկարելի է միանգամայն այդ բոլորը մի լրագրական յօդուածում ամփոփել։ Եթէ մէկը մօտից ծանօթանալ ցանկանայ Վունդի հետ, արժէ նրա երկերը կարդալ, մանաւանդ որ, ինչպէս մեզ յայտնի է, ռուսերէն թարգմանված են նրա մի քանի էական գրքերից։

Գ. Էդիլեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

—

✦ Թղթակից մը Տիգրանակերտ գտնըված իր մէկ բարեկամին նամակէն հետևեալ սրտաճմլիկ լուրը կը հաղորդէ մեզ. «Այս ձմեռ քաղաքիս և շրջակայ գիւղերուն մէջ կը գտնուին Հայաստանի ներքին գաւառներէն—Վանէ, Բիթլիսէ, Բուլանըխէ և այլն—եկած մօտաւորապէս 10,000 կարօտ հայեր, որոնց մէջ կան շատ կանայք և երեխայք։ Ասոնցմէ շատեր պտղաբեր դաշտերու մէջ բնակող բարեկեցիկ երկրագործ ընտանիքներու անդամները կը կազմէին երբեմն ու առատութեամբ կը հոգային իրենց դիմող չքաւորներու՝ պէտքերը, սակայն ներկայիս մէջ կողոպտուած, կիսամերկ, անօթի և ծարաւ՝ իրենք արտասուալից աչքերով կը դիմեն ազգակիցներու, անոնցմէ ողորմութիւն հայցելու նպատակաւ։ Շատեր՝ հացէ աւելի գործ կը խնդրեն և կը փափաքին տեղ մը ղրկուիլ, որ կարող ըլլան ցանել, աշխատիլ և իրենց քրտինքով ապրուստ մը ճարել. սակայն խնդիրը է, թէ ուր երթան և ինչպէս։ Թէև տեղւոյս հայերն ամեն ջանք ի գործ կը դնեն իրենց թշուառ ազգակիցներուն կարեկցաբար օգնելու, բայց չեն գիտեր, թէ որ մէկուն օգնեն և որքան ժամանակ։» («Կոչ.»)

✦ Հալէպի մէջ գետնի մը ազդին սեփականութեան խնդիրը վերջնականապէս լուծուած է՝ կէսը ազդին, իսկ միւս կէսը մերձակայ թէքքէի մը յատկացնելու որոշմամբ։ («Իր.»)

ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱՆ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Մարտի 19-ին հրատարակած Սպիտակ գրքի պատճառով անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը հրատարակեց մարտի 25-ին նոր Սպիտակ գիրք, որ պարունակում է ռուսական առաջարկութիւնը և Գրէյի պատասխանը մարտի 22-ից։ Արտաքին գործերի մինիստրութեան ցոյց տուած շտապողականութիւնը ցոյց է տալիս, թէ ինչ մեծ նշանակութիւն է տալիս անգլիական կառավարութիւնը ներկայումս պետութիւնների միջև տեղի ունեցող բանակցութիւններին։ Գրէյի պատասխանի բնաւորութիւնը ռուսաց առաջարկութեանը ամենալաւ ապացոյց է, թէ որքան բարեացակամ է Անգլիան դէպի նա։ Արդէն նախընթաց Սպիտակ գիրքը ապացուցեց Վիեննայի մամուլի մտացածին սխալը, որ իբր թէ Ռուսաստանը կատարելապէս մերժել է անգլիական նախագիծը և Անգլիան մակեդոնական հարցում մնացել է մենամենակ։ Որպէս ռուսական նախագիծը չէր մերժում անգլիականը, այլ լրացնում էր, այնպէս և այժմ Գրէյի պատասխանը ռուսական նախագծին, ընդունելով նրան, մտցնում է ուղղումներ, չը փոխելով վերջինի հիմքերը։ Գրէյի պատասխանի մէջ պէտք է շեշտել նրա առաջարկած գործնական միջոցը՝ ստիպելու Բ. Դրան զիջումներ անել։

Ուրեմն Անգլիայում ընդհանրապէս բարեացակամութեամբ է ընդունվել ռուսական նախագիծը։ Այդ բանը վկայում են և Լոնդոնի մամուլի արտայայտած կարծիքները։ Աւելի բնորոշ է ազատամիտ «Daily Chronicle» լրագրի կարծիքը, որը յոյս է յայտնում, որ Անգլիային և Ռուսաստանին կաջողվի ստեղծել ընդհանուր նախագիծ և որ անգլո-ռուսական համաձայնութեան ազդեցութեան շրջանը այդպիսով կը տարածվի և Մերձաւոր Արևելքի վրա։

Միաժամանակ ռուսական առաջարկութիւնը հավակրական ընդունելութիւն գտաւ և Ֆրանսիայում։ Պիշոնի վերջերս յետաձգվող բացատրութիւնները նրան արած հարցապնդումի առիթով, վերջապէս, նա ուտեց պատգամաւորների ժողովում մարտի 25-ին։ Պիշոնն ասաց, որ Ֆրանսիան դէմ չէ երկաթուղային որ և է նախագծի, որովհետև ճանապարհները կուլտուրայի գործիքներ են։ Ռուսական առաջարկութիւնը Պիշոնը ընորոշում է որպէս «մի փոքր տարբերվող» անգլիականից։ Պիշոն ասաց, որ Ֆրանսիան հէնց առաջին վայրկեանից հաղորդեց Ռուսաստանին, որ նա պաշտպանելու է վերջինի առաջարկութիւնը։

Պետութիւնների վերաբերմունքը բէֆորմների, զանազան նախագծերի վերաբերմամբ արդէն պարզված է։ Ըստ երևոյթին, ռուսական նախագիծը նախապատիւ է համարվում։ Մնում է ցանկալ, որ եւրոպական պետութիւնների կոնցերտը խօսքից անցնի գործի։ Գարունը կանգնելուն պէս Բալկանների վրա կը զարկէ 12 ժամը։ Կարող են տեղի ունենալ դէպքեր, որոնք կարող են տակն ու վրա անել ամեն վերացական դատողութիւններ։

Սոֆիայի միտինգը, որին մասնակցել են մօտ 10,000 մարդ, վկայում է, որ չափազանց յուզված են մարքերը Բալկանեան թերակղզու վրա։ Կատասարօֆայի առաջն առնելու ամենալաւ միջոցն է՝ գործնական աշխատանք սկսել։ Թող Բալկաններում սկսեն երկաթուղիներ կառուցանել, թող Մակեդոնիայում սկսեն բէֆորմներ մտցնել, և դա կը ստեղծէ նպաստաւոր պայմաններ նօրմալ կեանք տալու համար տուեբված նահանգներին։ («Слово»)

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Փրովիդէնս, 17 մարտի (ն. տ.)

Ահա 5—6 ամիս է, որ Ամերիկայի Միացեալ-Նահանգները տնտեսական տագնապի ճգնաժամի մը մէջ կը գտնուին, որովհետև այս երկրին դրամական հրապարակին իշխող միլիարատէրերն այս վերջին ժամանակներս իրենց միլիոնները քաշեցին դրամական հրապարակէն։ Անոնց այդ արարքը, սակայն, առանց պատճառի չէր։ Խնդիրն այն է, որ այս երկրին դրամի իշխանները կամ բրօսները իրենց ափին մէջ էին առած երկրի ամբողջ ընակչութիւնը և սանձարձակօրէն կը կեղեքէին դայն։ Իրենց այդ անբնական ու քմահաճ դրութիւնը չէր կրնար վրիպիլ նախագահ Ռուզվէլտի աչքէն, և ան, իբրև երկրի մը արդարակորով պետը, սկսաւ միջոցներ ձեռք առնել՝ անկուշտ որովայններու ախորժակը սահմանափակելու համար։ Նախագահին այդ ուղղութեամբ առած քայլերը, հարկաւ, միլիարատէրերուն հաճելի ըլլալէ շատ հեռու էին, ուստի դրամի իշխանները, իրենց կողմէն, քաշեցին իրենց դրամները հրապարակէն՝ երկիրը միանգամայն մատնելով ծանր ճգնաժամի։ Եւ այդ ճգնաժամի հետևանքով՝ այսօր բնակչութեան 60%-ն անգործ է մնացած, որուն իբրև պերճախօսու անմիջական արդիւնքն այն է, որ անձնասպանութիւններն ու անսուղութենէ մեռնողներու թիւը զգալաբար կաճի, այնպէս որ առօրեայ թերթերու մէջ սովորական բան կը դառնայ այդպիսի դէպքերու նկարագրութիւնը։

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ

Գործազուրկներ.—Ամերիկական աշխատանքների ֆեդերացիան մօտ ժամանակներս հրատարակել է ստատիստիկական տեղեկութիւններ, որոնցից երևում է, որ գործազուրկների թիւը Միացեալ-Նահանգներում ներկայումս հասնում է, 4,750,000 հոգու։ Այդ թիւերի համար նիւթ են ծառայել 37 նահանգների ֆեդերացիաների լիազօրների հաղորդագրութիւնները։ Այդ թիւերը ֆեդերացիան ինքն էլ հաստատում է միանգամայն ճիշտ։ Բայց նոյնիսկ նրանց մօտաւոր ճշտութիւնը ստիպում է լուրջ մտահոգութեան մէջ ընկնել։ Իրերի դրութիւնը, ֆեդերացիայի տեղեկութիւնների համաձայն, ոչ միայն չէ լաւանում, այլ և աւելի ու աւելի է վատթարանում։ Գաղթականութիւնը դէպի Եւրոպա սաստկանում է։ Աւելորդ անգործ ձեռքերը Ամերիկան ուղարկում է Հին-Աշխարհին։

ԻՏԱԼԻԱՆ ԵՒ ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՆ

Դաշնակիցներ սպառազինվում են իրար դէմ.—Եռապետական դաշնակցութեան երկու անդամները՝ Ունգարիան և Իտալիան չեն դադարում սպառազինութեան պատրաստութիւններ տեսնել իրար դէմ՝ թնդանօթներով ու ռազմանաւերով ապահովելու իրանց գոյութիւնը։ «Jiornale d'Italia» լրագրի ասելով, զինուորական գործերի մանաւանդ ոլովի տուած զեկուցման արդիւնքը եղաւ այն, որ առաջարկվեց Վենետիկը ամրացնել ցամաքային կողմից և մի շարք ամրութիւններ շինել աւստրիական սահմանի վրա։ Եթէ աշխատանքները սկսեն անմիջապէս, գուցէ հնարաւոր լինի ծրագրված ամրութիւնները վերջացնել երկու տարվայ ընթացքում։

ՖՐԱՆՍԻԱ

Պարիզից մեզ գրում են՝ մարտի 13-ից. «Հանօտօն գրել է ֆրանսիական լրագիրներում մի յօդուած գերմանական խոշընդոտների դէմ Մարոկկոյում և յանդիմանում է ֆրանսիական կառավարութիւնը, որ վերջինս գերմանական այդ ոտնձգութիւնները ծածկում է ֆրանսիական ժողովրդից։

«Նախագահ Ֆալիէրը մայիսի վերջերում գնալու է Լոնդոն՝ ֆրանս-անգլիական ցուցահանդէսին ներկայանալու։ Նախագահին ուղեկցելու է արտաքին գործերի մինիստր Պիշոնը։

«Ֆրանս-անգլիական դաշնադրութիւնը պէտք է որ ներկայումս շատ ամրակուռ համարել, քան կարելի էր երեկայել երբ-ևիցէ։

«Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ անգլիական առաջարկութիւնը—նշանակել Մակեդոնիայում կառավարիչ՝ անկախ սուլթանից հաւանութիւն է գտել միայն ֆրանսիական և իտալական կառավարութիւնների կողմից, ծածուկ անբաւականութիւն է յարուցել աւստրիական և ռուսական կառավարչական շրջաններում, իսկ բացարձակ հակառակ է հանդիսանում գերմանական թիւրքամոլ կառավարութիւնը։ Ոչ մի կասկած չը կայ, որ եւրոպական դիպլոմատիայի ներկայացուցիչները այդ օրինակ հարցերում նախ ի նկատի ունեն իրանց քաղաքական գծուծ շահերը»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

2 ապրիլի

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ. Երէկ երեկոյեան հելլէնների թագաւորը ընտանիքով մեկնեց Պետերբուրգ։

3 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մինիստրների խորհուրդը ընդունեց օրէնսդրական հաստատութիւններին յանձնելու համար կանանց ուսուցչական սեմինարիաների կանոնադրութեան նախագիծը։

Արտաքին

ՎԱՇԻՆԳՏՕՆ. Նախագահը դիմեց հօնգբէսին մի նամակով, որով դումար է խընդրվում չորս զրահանաւեր կառուցանելու համար։

ԲՈՒԽԱՐԵՍՏ. Գատգամաւորների պալատի ընդունած շինական կալուածքները կապալով տալու իրաւունքը սահմանափակելու օրինագիծը ընդունվեց սենատից։

ՀՌՕՄ. Ապրիլի 1-ի երեկոյեան թագաւորը ի պատիւ Բիւլովի ճաշկերոյթ սարքեց։ Հետևեալ օրը մի ժամ համարեա խօսակցեց պապի հետ։ Բիւլովին ուղեկցում էր Հոֆի ռուսաց դեսպանը։ Ապա Բիւլովը այցելեց ստատս-սեկրետար Մէրրի-դէլ-Վալին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՒՐՍԱՑԻՆ ԳՆԵՐԸ

3 ապրիլի 1908 թ.

Տոկոսաբեր արժեթղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախաղի	346 ր.	— կ.
Տոմսակ II փոխ. վիճակ. .	256 ր.	— կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	237 ր.	— կ.
4% Պետական Բենատ . .	76 ր.	25 կ.
5% փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	86 ր.	— կ.
4½% փ. թ. Պետ. » » »	78 ր.	75 կ.
4% փ. թ. Պետ. » » »	73 ր.	— կ.
3½% Դրաւ. թ. Պետ. » »	70 ր.	37½ կ.
5% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	86 ր.	— կ.
4½% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	78 ր.	25 կ.
4% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	73 ր.	25 կ.
5% Ներքին փոխ. 1905 թ. I	96 ր.	75 կ.
5% » » » » II	96 ր.	75 կ.
5% Արտաքին փոխ. 1906 թ.	95 ր.	25 կ.

ԲՕՐՍԱ

Լոնդոնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր.	60 կ.
Բերլինի վրա 100 մարկը »	46 ր.	79 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր.	2 կ.
Նութ. թղթ. Նօրել ընկ. »	11,275 ր.	— կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4100 ր.	— կ.
Բագուի ընկ. » »	502 ր.	— կ.
Մանթաշեանի » »	155 ր.	50 կ.

ԱՆԴՐԿՈՒԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԶՄԵՌԱՑԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու	Բագուից Թիֆլիս
Արագ. գիշ. 12 ժ. 28 ր.	Արագ. երեկ. 5 ժ. 02 ր.
Պօստ. երեկ. 9 ժ. 41 ր.	Պօստ. ցերկ. 12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ. 7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ. 4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաքում	**Բաքումից Թիֆլիս**
Մարդ. առաւ. 10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ. 10 ժ. 38 ր.
Պօստ. առաւ. 9 ժ. 15 ր.	Պօստ. առաւ. 6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ. 11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ. 5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երեւան	**Երեւանից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 8 ր.	Պօստ. ցերեկ. 1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ. 12 ժ. 52 ր.
Կարսից. Ալեքսան.	**Ալեքսանդր. Կարս**
Պօստ. երեկ. 5 ժ. 48 ր.	Պօստ. ցերեկ. 12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ. 5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ. 3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա	**Ջուլֆայից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 08 ր.	Պօստ. գիշ. 6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր. 6 ժ. 54 ր.

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Ղ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. առամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանդաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵՊՈՆՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Զեղարը 50 կ.։ Հաւաքորդը ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Փորձված սերմեր

ՍԵՐՄԵՐ

ցանելու համար

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ

ԾԱՂԿԱՅԻՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Գրէյսկուրացեն ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-°
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—13

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—28

Առաջին Կովկասեան Պահեստ
✦ ՍԵՐՄԵՐԻ ✦
ԼԱՐՇԷ
Գոյութիւն ունի 1872 թուից
№ 23, Միխայլովսկի պր., № 23
առաջարկում է
ՍԵՐՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի
ՓՈՐՁՎԱԾ
Ցայտնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ Բաղադիր Տուփիգինն է—6 մսխալը—2 բուբլի։ Գուժարով գնողներին զեղչ։
(ա. օ.) 10—9

ОЖИРѢНІЕ
его послѣдствія и лѣченіе
соч. Д-ра Л. МАРКОНИ
Цѣна съ пересылкою 20 коп. (можно марками). Складъ изданія у
Евг. Беверъ, Москва
Покровка, д. Арбатскихъ.
(4, 12, 26, 10, 24) (54829) 5—4

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Նախորդ տարիների օրինակով Հայ Դրամատիկ Ընկերութեան Վարչութիւնը նշանակել է այս տարի երեք մրցանակ. 1)—150 ր., 2)—150 ր. և 3)—100 ր. յաւագոյն ինքնուրոյն և 4)—100 ր. լաւագոյն թարգմանական դրամատիկական գրուածքների համար։

Պիէսները պէտք է ուղարկվեն Վարչութեան ոչ ուշ քան օգոստոսի 1-ը այս 1908 թ.։

Մրցանակաբաշխութեան ժամանակը որոշումը կը յայտարարվի մինչև հոկտեմբերի 1-ը։

Մանրամասն պայմանները և տեղեկութիւնները կարելի է ստանալ Դրամ. Ընկ. գրասենեակում, Пушкинская ул., д. Кредитнаго О-ва.

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՊՐՕԳՐԵՍԸ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ
(սոցիօլոգիական պրօբլեմներ)
հետևեալ բովանդակութեամբ.
Առաջաբան։ Ներածութիւն։ Առաջին հատուած. Ազգ, դասակարգ եւ կուսակցութիւն։ I գլուխ. Ազգ և դասակարգ.—II գլ. Դասակարգային իդէօլոգիա, կուսակցութիւն.—III գլ. Ազգը և դասակարգային կուսակցութիւնը։ Երկրորդ հատուած. Դասակարգային տիրապետութիւնը.—IV գլ. Տիրապետող և տիրապետվող դասակարգերը—բուրժուազիան և պրոլետարիատը.—V գլ. Հասարակութեան միւս շերտերը.—VI գլ. Դասակարգային պետութիւն.—VII գլ. Ազգայնութեան և ազատ քաղաքացիութիւնը։ Երրորդ հատուած. Բուրժուական նացիոնալիզմը եւ նրա զանազան ձեւերը. VIII գլ. Ի՞նչ է նացիոնալիզմը.—IX գլ. Ի՞նչ է պատրիոտիզմը.—X գլ. Ազգասիրական նուաճողական նացիոնալիզմը.—XI գլ. Դեմոկրատական ազատագր. նացիոնալիզմը.—XII գլ. Բուրժուական իմպերիալիզմը և պատերազմը։ Չորրորդ հատուած. Պրոլետարական ինտերնացիոնալիզմը. XIII գլ. Պրոլետարիատի դասակարգային և ազգային քաղաքականութիւնը.—XIV գլ. Պրոլետարիատը և հայրենասիրութիւնը.—XV գլ. Պրոլետարիատը և ազգային հարցը։ Հինգերորդ հատուած. Վերջաբան. XVI գլ. «Ազգային կոմակցութիւն և ազգային քաղաքականութիւն».—XVII գլ. Եզրափակիչ դիտողութիւններ։
310 երես, գինն է 50 կոպ., քանակով գնողներին՝ զեղչ։
Դիմել՝ Թիֆլիս «Գուտենբերգ», «Փորոս» գրախանութներին և «Գործի» խմբագրատան։ Բագուում՝ «Սօտրուդնիկ» գրավաճառ. և «Ցոյս» բիւրօին (Газетн. Бюро „Уйсъ", уг. Балаханск. и Магазин. ул.).
о. д. 5—2

Типографія „Экономія" Аваки Мугдусіанова съ С-ми.
Большая Ванкская т. п. Семинаріи № 8.